



## Ռազմական բարեփոխումները Հայաստանում I

Սեմինար ՀՀ պաշտպանության նախարարությունը քաղաքացիական անձնակազմով համալրելու և «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ

### Կազմակերպված է ՀՀ պաշտպանության նախարարության հետ համատեղ

<b>Ժամկետներ</b>	<b>Փետրվարի 5 – 7, 2007թ</b>
<b>Վայր</b>	Երևան, Հայաստան
<b>Նախապատմություն</b>	<p>ՆԱՏՕ-Հայաստան հարաբերությունները նկատելի զարգացում ապրեցին 2005թ. դեկտեմբերին Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի (ԱԳԳԾ, IPAP) հաստատման շնորհիվ: ԱԳԳԾ-ն հաստատող իր փաստաթղթում Հայաստանը պարտավորություն է ստանձնել վերակազմավորել իր Ձինված Ուժերի կադրային կառավարման համակարգը և «քաղաքացիականացնել» Պաշտպանության նախարարության անձնակազմը: Այս բարեփոխումների հետ մեկտեղ, Հայաստանը նպատակ է սահմանել փոփոխություններ կատարել 1997թ. ընդունված «Պաշտպանության մասին» օրենքում, ինչն ուղղված է նպաստելու «քաղաքացիականացման» և վերակազմավորման գործընթացներին: Սեմինարի նպատակն է աջակցել Հայաստանին պաշտպանության համակարգի բարեփոխումների իրականացման գործում:</p>
<b>Խնդիրներ և նպատակներ</b>	<p>Սեմինարի նպատակն է աջակցել Հայաստանին պաշտպանության ոլորտի բարեփոխումների իրականացման գործում, որոնք թույլ կտան ապահովել համապատասխանությունը ժողովրդավարական հասարակություններում գործող արժեքների հետ: Սեմինարի երկու հիմնական խնդիրներն են.</p> <ul style="list-style-type: none"> <li>- առաջինը. ՆԱՏՕ-ի մի շարք նորընտիր անդամ-պետություններից ժամանած փորձագետներն իրենց հայ գործընկերներին կպատմեն պաշտպանության ոլորտում իրենց մոտ կատարված բարեփոխումների մասին: Ռազմական փորձագետները, մասնավորապես, պետք է կենտրոնանան իրենց պաշտպանության նախարարությունների և զինված ուժերի կառուցվածքային, վարչական և կադրային քաղաքականության բարեփոխումներին՝ շեշտադրումը կատարելով զինված ուժերի կադրային կառավարման համակարգի վերակազմավորման և ՊՆ «քաղաքացիականացման» վրա: Նպատակը կայանում է ոչ թե ձեռքբերված հաջողությունները և առաջացած բարդությունները ներկայացնելու, այլ կադրային կառավարման ընտրված համակարգի զարգացման և ՊՆ քաղաքացիական վարչական կառուցվածքի մշակման, կատարված ընտրությունների, ինչպես նաև Ձինված Ուժերի հրամանատարական կառուցվածքի և ղեկավարման ու վերահսկման համակարգի հիմնավորման մեջ: Այս տեղեկություններ կտրամադրվեն բարեփոխված պաշտպանության նախարարության և գլխավոր շտաբի կազմում զինվորական հաստիքները քաղաքացիականների վերափոխելու համար կիրառվող չափանիշների մասին:</li> <li>- սեմինարի երկրորդ նպատակն է 1997թ. «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի ներկայացումը և միջազգային ու ՀՀ փորձագետների կողմից օրենքում առաջարկվող՝ վերակազմավորման ու «քաղաքացիականացման» գործընթացներն ապահովող փոփոխությունների մասին կարծիքների հնչեցումը:</li> </ul>
<b>Մասնակիցներ</b>	<p>Մոտ 60 մասնակիցներ: 44 հայ մասնակիցներ, այդ թվում՝ ՀՀ ՊՆ-ն և ՁՈՒ ԳՇ-ն ներկայացնող 30 սպաներ և փորձագետներ: Մնացյալ 14 հայ մասնակիցները կներկայացնեն Ազգային ժողովի ֆինանսաբյուջետային, պաշտպանության, ներքին գործերի և անվտանգության հանձնաժողովները, ԱԳՆ-ն, այլ նախարարությունները և գերատեսչությունները:</p> <p>Բացի այդ՝ GCMC 7 նախագահողներ, 2-ական փորձագետ աշխատանքային խմբերի համար, 2 ռազմական իրավաբան, ՆԱՏՕ-ն ներկայացնող 1-2 խոսնակներ, 1-ական ներկայացուցիչ Էստոնիայից, Լատվիայից (կամ Լիտվայից), Բուլղարիայից (կամ Ռումինիայից), ԱՄՆ ՁՈՒ անձնակազմի և կադրերի գծով 1-2 փորձագետ և 1 պատասխանատու սպա EUCOM-ից:</p>

## Ծրագիր

Սենիմարը կշարունակվի երեք օր: Սենիմարի առաջին օրը ելույթ կունենան ՆԱՏՕ-ի նորընտիր Բալտյան և Արևելաեվրոպական անդամների ներկայացուցիչները՝ ներկայացնելով իրենց երկրներում ծավալվող ռազմական բարեփոխումների գործընթացը: 1-ին օրվա երկրորդ կեսը և 2-րդ օրվա մեծ մասը աշխատանքային խմբերը քննարկումներ կծավալեն ՀՀ ՊՆ «քաղաքացիականացման» և կադրային կառավարման համակարգի վերակազմավորման շուրջ: 2-րդ օրը կավարտվի 1997թ. «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի ներկայացմամբ, իսկ 3-րդ օրվա ընթացքում աշխատանքային խմբերը առաջարկություններ կներկայացնեն պաշտպանության ոլորտի բարեփոխումների գործընթացն ապահովող օրենքի փոփոխությունների վերաբերյալ և քննարկումներ կծավալեն դրանց շուրջ: Սենիմարը կավարտվի աշխատանքային խմբերի ամփոփիչ զեկույցների ներկայացմամբ: Սենիմարի արդյունքում պետք է մշակվեն «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքում առաջարկված փոփոխությունների և լրացումների ցանկը և ՊՆ «քաղաքացիականացման» և կադրային կառավարման համակարգի վերաբերյալ նախնական առաջարկությունները:

Սենիմարի աշխատանքային լեզուները կլինեն հայերենն ու անգլերենը:

## Լրացուցիչ տեղեկություններ

Կոնֆերենց-կենտրոն, «Ա» բաժին, Ջորջ Մարշալի անվ. անվտանգության հետազոտությունների եվրոպական կենտրոն  
Փ/զ-տ Թոմաս Մերգել (Գերմանիայի բանակ)  
Է-փոստ. [mergelt@marshallcenter.org](mailto:mergelt@marshallcenter.org)  
Հեռ. +49 (0)8821 750 2658  
Ֆաքս. +49 (0)8821 750 2841  
Էլ. կայք [www.marshallcenter.org](http://www.marshallcenter.org)

ՀՀ ՊՆ արտաքին հարաբերությունների և ռազմական համագործակցության վարչության պետի տեղակալ  
Փ/զ-տ Նիկոլայ Ավետիսյան  
Հեռ. +374 10 281609  
Ֆաքս. +374 10 281674  
Է-փոստ. [frmcd@mil.am](mailto:frmcd@mil.am)